

Ֆի լալանկայի, և ընդ մաճնոյ խառնեն և առնեն իբրեւ զլոխմայ, և ի դնելն զայն ի բերան տեառն՝ բուժ մատամբն փորը ինչ մղէ ի ներքս ի բերանն:

Եւ ի սմին խրախճանի էր նաեւ թովմաճան ընդ որդւոյն, զորս մերձ ինքեան նստոյց թագուհին. և սորա ըստ սովորութեան մերոյ իւրեանց ձեռքն ուտէին զկերակուրն և ցորենի հացով, և որոշեալ էր սեղան սոցին ի նոցանէ: Իսկ այլքն սպասաւորի ձեռք ուտելովն՝ փառք համարէին ինքեանց և ծիծաղէին ի վերայ թովմաճանին: Եւ թովմաճանն ընդ որդւոյն հանդարտօրէն ուտէր իւր ձեռամբն. և թագուհին եւս համաձայնեալ ընդ թովմաճանին՝ սկսան ծիծաղել ի վերայ նոցա: Եւ յորժամ սեղանն մերձ եղեւ յաւարտել, բերին զհում միս կովու նորոգ մորթեալ՝ իբր մեզէ մրգեղինաց, և սկսան սպասաւորք զխուշապաշի կտրատել և դնել ի բերան տեարցն իւրեանց, և հարցանէին թովմաճանին թէ դու եւս կամիս ուտել զհում միս: Իսկ նա տհաճելով և խոժոռոց մերձ էին նմա ոչ եթող ուտել ամօթելով: Եւ ժպտեալ իթեկէն, յոյժ հաճեցաւ ընդ այն, զի ինքն եւս ոչ ուտէր զհում միս: Եւ յորժամ իմացաւ թովմաճանն զհում միս չուտելն թագուհւոյն, ճանն զհում միս չուտելն թագուհւոյն, յայնժամ սկսաւ համարձակ ծաղր առնել յայնժամ սկսաւ համարձակ ծաղր առնել թեամբ, վասն զի և այսր պատճառի այսինքն հում միս ուտելոյ չորս անգամ ի ինքն հում միս ուտելոյ չորս անգամ ի տարւոջ ըմպէին զլուծողական դեղս, ապա թէ ոչ որդունը ի ռնգացն թափէին... Զայս քննեալ և ուտեալ ի թովմաճանէն բազումք մեծամեծք հրաժարեցան, և այնուհետեւ ոչ ուտէին զհում միսն: Եւ երբեմն ի յոմանս տունս որք ուտէին՝ ընդ գնալ թովմաճանին անդր, իսկոյն ամբարձեալ զհում միսն ընդ սեղանովն դնէին, զի մի ծաղր լիցուք թովմաճանին՝ ասէին:

Եւ աստէն զիցուք զպատճառն հում միս ուտելոյ նոցա թէ ուտի իցէ յառաջացեալ պատմեցուք. այլ եւս զկերպն սեղանոյ հացին:

Այս կեօնտէր քաղաքն հասէ թագաւորի (նախ քան զ225 տարի, որ է 1540 թուին) ունէին զբազում մահմետական ստրուկս. և ի մէջ քաղաքի խառնեալ ընդ նոսա բնակէին. և այս մահմետականք ի մէջ իւրեանց խորհեալ են թէ՛ Եկայք յարուցուք զխոռովութիւն ինչ և տիրապետեցուք քաղաքիս և զընդդիմողսն կոտորեցուք. և այսու խորհրդով յանկարծակի յաւուր միում յարուցեալ սկսան պատեալէսն, և զբազումս խողխողեալ դիւթաւալ կացուցանէին և փախստեայս լինէին ի ծերպս և ի քարանձաւս ի մեծ անէ և յերկիրդէ մահմետականացն ի զիշերի և ի տուրնջեան, զի ոչ կարէին լուցանել զհուր առ ի պէտս կերակրոյ. վասն զի ի տուրնջեան ի ծխոյն, և ի զիշերի ի լուսոյ հրոյն երկնչէին. զի ի տեսանելն տաճկաց զժուխս կամ զլոյսն հրոյ՝ յուղի անկեալ գնացեալ սպանանէին: Ուստի և այս փախստական հասէ զսկսան զմիսն հում հում ուտել, և ահա յայս պատճառէ մնացեալ է հում միս ուտելն հասէ ընդ, որպէս ինքեանք խոստովանեցան:

Արդ իբրեւ հեռացան հասէ ընդ, ազգարարեալ միմեանց ժողովեցան ի միում տեղւոջ, խորհեցան բառնալ զմահմետատեղւոջ, խորհեցան բառնալ զմահմետականսն այսու կերպիւ. և ընտրեցին ի մէջ կանսն այսու կերպիւ. և ընտրեցին ի մէջ իւրեանց զ20 արս խոհեմս առաքել ի Հոմ առ թագաւորն Բորթուկիզու, և ի նմանէ եղիցի մեզ օգնութիւն ստանալոյ զթագաւորութիւնն մեր, զի նա ի կողմանէ Միւսէմպիկի սահմանակից մեր է այն: Եւ Միւսէմպիկի սահմանակից մեր է այն: Եւ առ այս խորհուրդ հաճեցան ամենեքեան առ և ետուն նոցա գանձս բաւականս և առաքելին զ20 արսն զայնոսիկ ի Հոմ առ Սրբազան Պապն Գրիգոր ԺԳ. (1549) և ետուն նմա գնամակս աղետից իւրեանց՝ որ էր այսու օրինակաւ. «Մեր ուղղափառ Հապէշի բրիտանոսկայրս որ ի յԱֆրիկա, ունեար գրագրու մահմետական ստրուկք այսու ինքն ռայէր, սորս սպասաւորեալ սպանիլ զրագրուս ի մեզ և տիրեցիլ զրագրուս և իստ քաղաքն մեր զկեօնտէր. և իսկոյն մեր

ի սրբաբնեղ զի միջնորդեցես Բորթուկիզու քաղաքիս, զի ևս սահմանակից մեր է և կարե զօգնութիւնս ստեղ մեզ»:

(Եւ սորա գնացեալ ի Հոմ առ Սրբազանն, մատուցին նմա զաղետից նամակն) և Պապն ցաւակից լեալ զբարուր յանձնարարութիւնս ինչ զրեաց և ետ նոցա տանել առ թագաւորն Յոհաննէս Գ. Բորթուկիզու, համանգամայն պատմելով զթըռուաութիւնս նոցին և եւս թէ ուղղափառ քրիստոնեայ գոլով նոցա, պարտիմք և մեք օգնել նոցին եւս:

Եւ այն 20 հասէ ընդ առեալ զգիրն Պապին Գրիգորի ուրախութեամբ ելեալ գնացին ի Բորթուկէզ քաղաքն և ետուն թագաւորին Յոհաննէս: Եւ թագաւորն յորժամ ծանեաւ զթըռուութիւնն նոցա, և ինքն բարեպաշտ գոլով՝ հրաման արար պատրաստել և զարդարել զհինգ նաւ զօրօք և ամենայն կահարարսի պատերազմականօք. և յորժամ պատրաստեցան զրեաց զհրովարտալն թագաւորական առ սպարապետն իւր որ էր Միւսէմպիկ քաղաքն իւր ի Աֆրիկա ի կողմն ովկիանոսի հանդէպ Մատակասկաու կղզւոյն և հրամայելով նմա, զի անպատճառ առանց ինչ ընդդիմութեան գնացէ ի Հասէ ընդ թագաւորանիստ քաղաքն ի կեօնտէր, և առեալ զայն ի ձեռաց ապրստամբեալ մահմետականաց՝ տացէ հասէ ընդ որպէս էր յառաջն:

### ՀԵԹՈՒՄ ԲՆ ԱՅՑԸ ՂԱԶԱՆ ԽԱՆԻ

Հեթում տէր կոռիկոսի՝ որ ծանօթ է իբր Հեթում Պատմիչ Թաթարաց անուամբ մեր հին պատմիչներուն կարգին, իր Համառոտ Պատմութեան մէջ 1294 թուականին զիմաց կը նշանակէ, «299 սպանալ Քեղաթուն խանն, և նստաւ Պայտուն խան: Եւ ի սոյն ամի սպանաւ Պայտուն, և նստաւ խան Խազան, որդի Արտուն, և նստաւ խան Խազան, որդի Արտուն: Եւ ի նոյն ամի գնաց թագաւորն հայոց Հեթում առ Պայտուն և գտաւ խան զԽազանն»:

Հեթում Բե թաթարաց արքունիքը կատարած այս այցելութեան մասին Բիշ մը աւելի մանրամասնութիւն կու տայ Ստեփանն Օրբելեան իր Պատմութեան Բ. փանոս Օրբելեան իր Պատմութեան Բ. հատորին մէջ (էջ 222): Այս հատորը, սակայն Օրբելեան իր Ազգապատմութեան հատորին մէջ՝ հատուած Թ. 1189 (էջ 1727-8) կը ներկայացնէ կիլիկիոյ Հայոց թաթարաց հետ ունեցած յարաբերութեանց այս շրջանին մասին: Ան կ'ըսէ: «Ան (Հեթում Բ) կանուխէն մեկնած էր

ժամ ծանեաւ զթըռուութիւնն նոցա, և ինքն թագաւորն եւս յոյժ բարեպաշտ գոլով՝ հրաման արար պատրաստել և զարդարել զհինգ նաւ զօրօք և ամենայն կահարարսի պատերազմականօք. և յորժամ պատրաստեցան զրեաց զհրովարտալն թագաւորական առ սպարապետն իւր որ էր Միւսէմպիկ քաղաքն իւր ի Աֆրիկա ի կողմն ովկիանոսի հանդէպ Մատակասկաու կղզւոյն և հրամայելով նմա, զի անպատճառ առանց ինչ ընդդիմութեան գնացէ ի Հասէ ընդ թագաւորանիստ քաղաքն ի կեօնտէր, և առեալ զայն ի ձեռաց ապրստամբեալ մահմետականաց՝ տացէ հասէ ընդ որպէս էր յառաջն:

կիլիկիոյն՝ որ Քեղաթուն խանն յաջորդ Պայտունը շնորհաւորէ, սակայն սա արդէն Ղազանի յարձակումովը զբաղած էր, և Հեթում պարտաւորուեցաւ Մարաղայի մէջ, սպանել ֆաղդէացի պատրիարքին մօտ, մինչեւ որ գործը յստակուի: Իսկ երբ Պայտուն ինկաւ և Ղազան գահին տիրացաւ տուն ինկաւ և Ղազան գահին տիրացաւ և բարձրացաւ, փութաց անոր մատուցաւ ի բարձրացաւ, փութաց անոր մատուցաւ նել իր մեծարանքը: Այս առթիւ Ղազան հեզնօրէն դիտել տուաւ թէ նա ոչ իրեն, այլ Պայտունի համար ճամբայ ելած էր, որուն Հեթում կը պատասխանէ՝ թէ իրենք թաթարներու գերագահ իշխանութիւնը կը պատուեն, ով ալ ըլլայ զայն վարողը, ինչ որ Ղազանին շատ հաճելի կու գայ և մեծաշնորհ պատուով կ'ընդունի Հեթումը: Սա ալ համարձակութիւն կ'առնէ ծանուցանել արքայի զանցս աղետից քրիստոնեից,

1. Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր ժամանակէն 1319. Նկարագրից Արտուազդ Արքեպս. Սիւրմէան. - Անթիլիաս, 1933, էջ 101.



տատուի նաեւ որ Հեթում Բ. Սեպտեմբերի (1295) սկիզբը ճամբայ ելած է այցելելու Պայտունի՝ Կիլիկիայէն: Նոյեմբերի սկիզբները ներկայացած Ղազանին և նոյն ամսուան մէջ Կիլիկիա իր արքունիքը վերադարձած իր հետեւորդներով:

Հոս յարակից ճշտում մըն ալ: Օրմանեան Ստեփանոս Օրբելեանէ առնելով կը յիշէ ոսկիէ փաշիչայ մը Ղազան խանէ տրուած: Այս փաշիչան այլուր գրուած է քաշիչ մի ոսկի՝ որ կը տրուի վարդան վարդապետի 1264 թուին՝ երբ ան Հուլաղուի մօտ կը գտնուէր: Այս քաշիչ կամ փաշիչայն ըստ Օրբելեանի տախտակ է չափ քրդոյ միոյ և կիւոյ, գրեալ ի վերայ զանունն Աստուծոյ և զանունն Չոյլ ոսկիէ այս նշանները, կ'ըսէ Օրմանեան, «Թաթարներուն համար ամէնէն մեծ պատիւն էր» (Ազգապատում էջ 1662):

Բաշիչ կամ փաշիչայ Հայերէն աղաւաղումն է բայգայ (Paizah կամ Paizaf) որ իր կարգին աղաւաղումն է Չինարէն pai-tseuh: Կային բայիզաներ որոնք արծաթէ ձուլուած էին որոնց մեծութիւնը մօտաւորապէս  $12 \times 4$  ինճեզ էր, իսկ ձոյլ ոսկիէն կ'ըլլար  $6 \times 2$  ինճեզ: Ասոնց վրայ կ'ըլլար Աստուծոյ և ժամանակուան Թաթար գահակալին անունը: Բայգայ ըստացողը կը վայլէր մեծ հեղինակութիւն և

առանձնաշնորհումներ Թաթար հրկրամասին մէջ: Բայգայ տրուած է Մարգո Բօլոյի, վարդան վարդապետի, Ստեփաննոս Օրբելեանի, Մար Եահայէ Ալլահա Գ. Նեստորական Կաթողիկոսին, բոլորն ալ ժողարուն: Ընդհանրապէս միայն կը տրուէր Մոնկոլ արքունեաց ընտրանիին և արքունի տան անդամներուն:

Բայգաներուն հետ կը տրուէր նաեւ Եարլիկամ Եարլիկ (Yarligh կամ Yarlikh) տեսակ մը թուրքերոյ Սուլթաններուն Պոռնոքոչտի, որ առաւել կամ նուազ անցազիր մըն էր, և հրաման՝ վճարմամբ ձի կամ ջորի ստանալու իջեւաններէն:

Աւելցնեմ որ ցարդ ոսկիէ բայգայ չէ գտնուած: Իսկ արծաթէ հատ մը գտնուեցաւ 1846ին և կը գտնուի Լենինկրատի Ակադեմիոյ Թանգարանին մէջ: Ունի երկամար: Վրան Պասրա գրանշաններով և Մոնկոլ լեզուով գրուած է «Շնորհիւ յաւիտենական երկնից զօրութեան: Թող սուրբ ըլլայ Գախանի (Արքայից Արքայի) անունը: Ան որ անոր յարգանք չի մատուցաներ պիտի սպանուի և պէտք է որ մեռնի»:

Բայգայի կոնակը կայ թիւ 42. ծանրութիւնը՝ շուրջ բաւուտ է:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ՆԻԹԵՐ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

### ՀԱՅԵՐԸ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԷՋ ԺԷ ԴԱՐՈՒՆ

Անմահ Հ. Ալիշանի ՀԱՅ-ՎԵՆԵՏԻԱՆ վերջ շատ բան մը չի մնար վենետիկի Հայ գաղութի անցեալին վրայ աւելցնելու, բայց սակայն ինչ որ ալ ըլլայ արժանի է որ գտնուածը ներկայացուի:

The Hartford Seminary Foundation, Case Memorial Library (Hartford, Conn. U. S. A) Հայերէն

ձեռագրաց ցուցակը կազմած ատենս թիւ 95/200 ձեռագրին մէջ գտայ երկարաշունչ տաղ մը «Վասն Յակոբայ Նահապետին, և վասն ծննդեան Յովասափայ պետին, և վասն ծննդեան Յովասափայ և տեսանելոյ զերազն և պատմել հօրն և եղբարցն» որ շարադրուած է վենետիկ, ինչպէս որ տաղին վերջի հինգ տուները ցոյց կու տան, և զորս հոս կ'արտագրեմ:

«Եղեւ վճար բանիս այս ներբողական. Յակոբայ, Յովսեփայ և եղբարցն ամենայն, Կարգաւ ըզպատմութիւնըն վկայական, Դիրահաւան մանկանց նոր ուսումնական»:

Ի Հայոց տումարի հազար թուական, Ինքսուն և մին յարաբարեալ կան, Տաղաչափ շինեցաւ բանըս պատմաբան, Ոչ յինքենէ մըտաց այլ որոց ծնընդեան:

Ի կըզգիս ՎԵՆԵՏԻԱ ծով անտական, Ղարիպութիւն յերկիրս ի Ֆոանգստան, Այն որ Յովսէփ հասուց փառս լ' իշխանութեան, Հասցնու գամէն դարիպ իւր նաւահանգստեան:

Նուաստ յոգի Աջտուածատուր անարժան, Որ ըսկիզբն բանիս եւս կատարման, Լալով զձեզ աղաչեմ ընթերցողք սրբազան, Որք լի սրտիւ ասէք վասն իմ զՀայր մեղան:

Փառք քեզ Հայր և Որդի, Հոգիդ շնորհական. Որ տաս գհայցուածք սրտի յրք առ քեզ կարդան, Պարտիմք վեր առաքել փառ անլուական, Յանցեալ այժմոյս յաւետ յաւիտենական»:

Թուականը 1091, հաւասար է այժմու փրկչական 1642ին, երբ ի վենետիկ Աստուածատուր կը գրէ իր այս տաղը: Դրժտուածատուր կը գրէ իր այս տաղը: Դրժտախտարար այս Աստուածատուրի ինքնաթիւնն անձանթ կը մնայ ինձի. Հ. Ալիշանի «Հայ-Վենետ»ին մէջ ալ չի յիշուիր:

\* \* \*

Ծանոթութեան պատասխան մըն ալ՝ վե-

նետահայ գաղութին մասին՝ կը գտնեմ ուղեգրութեանց մէջ, Maximilian Missonի որ 1687-88 թուականներուն Եւրոպայի զանազան կողմերն այցելեց ի մէջ այլոց նաեւ վենետիկ՝ որուն մասին կը վկայէ թէ կրօնական բացարձակ ազատութիւն կը վայլէր «Այդ պատճառաւ իսկ Յոյները, Հայերը և Հրեաները թոյլատրուած են հրապարակաւ կատարել իրենց կրօնական սովորութիւնները»: Յետոյ կ'աւելցնէ. «Ես կարելի լաւագոյն հարցապնդումս ըրի Հայոց դաւանանքի մասին, բայց որովհետեւ իրենց Եկեղեցին ներկայիս կը նորոգուէր, ես առիթ չունեցայ իրենց պաշտամունքին ներկայ ըլլալ. և ոչ ալ ճշմարտութիւնը ուրիշներէն տեղաւանաւ. բայց, ինձի բարեկամ մը ըսաւ որ, անոնք շատ տարբեր կարծիք ունին քանի մը կէտերու մէջ»:

Missonի յիշած վենետիկի Հայ եկեղեցին, քաղաքին «Հայոց Ս. Խաչ» կոչուած եկեղեցին է, որ ըստ Հ. Ալիշանի արդէն բազմացած վենետահայ գաղութին նիւթական միջոցներով իսկ անոր նորոգութեան ձեռք կը զարնուի 1682ին և հազիւ կ'աւարտի 1688ին. իսկ 1689ի 8 Յունուարին «մեծահանդէս փառօք օծուեցաւ» (Հայ-Վենետ, էջ 594):

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

Wichita, Kansas. U. S. A.

1. A complete Collection of Voyages and Travels. — by John Harris, London 1764. — Vol. I. էջ 541. Բ. սիւն.  
2. Անդ, էջ 542, Բ. սիւն.